



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

19.07.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Զ. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 24.06.2021թ.),

Ս. Աղաբեկյանի (լիազորագիր՝ տրված 24.06.2021թ.),

«Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 23.06.2021թ.),

Պ. Վասիլյանի (լիազորագիր՝ տրված 08.07.2021թ.),

Խ. Հովհաննիսյանի (լիազորագիր՝ տրված 08.07.2021թ.),

ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ

Հ. Մնացականյանի (լիազորագիր՝ տրված 25.06.2021թ.),

Հ. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 25.06.2021թ.),

քննելով ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական
նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ
ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 18.06.2021թ. ներկայացված (21.06.2021թ. վարույթ
ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոք) և կից փաստաթղթերը,
պարզեցի հետևյալը.

1. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.06.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Առողջապահության նախարարությունը (Այսուհետ՝ Պատվիրատու) բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊԶԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (Այսուհետ՝ Ընթացակարգ), որը հրապարակվել է սույն թվականի մայիսի 24-ին, ժամը 15:58-ին, www.gnumner.am կայքում:

Հրավերի բացումը իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով՝ սույն թվականի հունիսի 1-ին, ժամը 16:00-ին:

Ընթացակարգին մասնակցության հայտ էին ներկայացրել հետևյալ չորս կազմակերպությունները՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն, «ԱՄ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ն «Մեդպրո» ՍՊԸ-ն և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն):

«ԱՄ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ի, «Մեդպրո» ՍՊԸ-ի և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել էին անհամապատասխանություններ: Պատվիրատուն առաջարկեց մեկօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները վերաբերում էին ֆիրմային անվանման և առաջարկվող ապրանքի ֆորմատի հստակեցմանը (մասնավորապես տուփում քանի հատ է): Մինչև մեկօրյա ժամկետի ավարտը «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն գրավոր դիմել էր ՀՀ առողջապահության նախարարությանը, առաջարկելով շտկում պահանջել նաև «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ից, քանի որ Հավելված 1.1-ում հստակեցված չէր ապրանքի մակնիշը: Գրությամբ պարզաբանվում էր մակնիշը նշելու կարևորությունը, ըստ որի կարող է տարբերվել նաև առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի կարևորագույն պայմաններից մեկը, մասնավորապես՝ բացելու պահից պիտանիության ժամկետը: Սակայն ՀՀ առողջապահության նախարարությունը անհասկանալի պատասխան էր տվել մեր կողմից ներկայացված գրությանը, ըստ էության չպատասխանելով գրության մեջ առաջադրված հարցերին, իսկ բանավոր հեռախոսազրույցի ժամանակ միանգամայն այլ պատասխան էր տվել (հեռախոսազանգը իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության 060808003 հեռախոսահամարին, բոլոր հեռախոսազրույցները ձայնագրվում են): Ուստի, «Կոնցեռն-

Էներգոմաշ» ՓԲԸ-ն ներկայացրեց ևս մեկ գրություն, որտեղ ուղղակիորեն պատասխանում էր ՀՀ առողջապահության նախարարության գնումների համակարգողի կողմից բանավոր կերպով տրված պարզաբանումներին, որտեղ արդեն ուղղակիորեն բարձրաձայնեցինք այն մասին, որ ունենք ողջամիտ կասկած, որ մրցույթի մասնակից «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն չի հստակեցնում ապրանքի մակնիշը, իսկ առողջապահության նախարարությունն էլ չի պահանջում հստակեցնել այն միտումով, որ վերջիններս պատրաստ են ընդունել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ցանկացած թեստ-երիզ (որի նախադեպը նախկինում ունեցել ենք: 2020թ-ին իրականացված ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելիս «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է Ջի Մեյթ Օրիջին թեստ-երիզներ, որոնց համար մասնակիցը տրամադրելու էր Ջի Մեյթ Օրիջին, մոդել PG-310 շաքարաչափ սարքերը, սակայն փաստացի հանձնվել է Ջի Մեյթ PS-004 թեստ-երիզներ, որոնց հետ միասին տրամադրել են Gmate Voice, PG-301 մոդելի շաքարաչափ սարքեր: Դրա մասին վկայում են վերջնական օգտագործողների բողոք-հայտարարությունները, նկարները և բաց նամակները սոցիալական ցանցերում), որը սակայն կրկին թողնվեց անպատասխան (տեսնել սույն բողոքի հիմքեր և հիմնավորումներ բաժնում):

Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և հրավիրել մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների սույն թվականի հունիսի 11-ին ժամը 15:00-ին (Armeps (www.armeps.am) համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով բանակցությունը նշանակվեց հունիսի 9-ին, սակայն հանձնաժողովի նախագահի և քարտուղարի հիվանդ լինելու պատճառով հետաձգվեց հունիսի 11-ին, ժամը 15:00-ին): Բանակցությունների արդյունքում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն նվազեցրել է գինը:

Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղ զբաղեցնող՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին: Ընկերությունների կողմից ներկայացված ապրանքի ամբողջական բնութագրերը տրամադրվել են գնահատող հանձնաժողովին՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման համար (Հայտերի գնահատման արձանագրություն N2՝ կազմված 15.06.2021թ.):

Հունիսի 15-ին հանձնաժողովը որոշել է հաղթող մասնակից ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ին (Հայտերի գնահատման N2 արձանագրություն՝

կազմված 15.06.2021թ.) և հունիսի 15-ին ժամը 20:23:05-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, իսկ հունիսի 16-ին, մեր կողմից պահանջելուց հետո ուղարկվել է մեզ:

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գնման առարկայի բնութագրերը պետք է **ամբողջությամբ և հստակ** նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ **բացառելով տարակերպ մեկնաբանությունը**: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»: [ընդգծումը մերն է]

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն. «Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված **փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին**, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և **ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը**»:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն. «6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին»: [ընդգծումը մերն է]

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և

գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն. «3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն տաս օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն **առնվազն հինգ օրացուցային օր է:**

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է»: [ընդգծումը մերն է]

2.2. ՀՀ Կառավարության 25.03.2021թ. 414-Ն որոշմամբ հատատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի համաձայն. «...21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. **Գնման առարկայի բնութագրերը:** Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող **ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի** վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:» [ընդգծումը մերն է]

26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

2.3. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն. «4. Ապրանքն ըստ նմուշի և (կամ) **նկարագրի** վաճառելիս վաճառողը պարտավոր է սպառողին հանձնել այնպիսի ապրանք, **որը համապատասխանում է նմուշին և (կամ) նկարագրին:**»

Նույն օրենքի 8-րդ հոսվածի 3-րդ մասի համաձայն. «3. Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) **անվտանգ օգտագործման** [օրինակ՝ բացելու պահից պիտանիության ժամկետը, որը խախտելու դեպքում անուղղակի կերպով կարող է վրանգ հասցվել սպառողի առողջությանը և կյանքին], նրա պահման, փոխադրման, օգտահանման համար անհրաժեշտ է պահպանել հատուկ կանոններ (այսուհետ՝ կանոններ), ապա արտադրողը (կատարողը) պարտավոր է դրանք նշել ապրանքի (աշխատանքի, ծառայության) պատկանելիք փաստաթղթերում, պիտակի վրա՝ մականշվածքով կամ այլ եղանակով, իսկ վաճառողը (կատարողը) պարտավոր է այդ կանոնների մասին տեղեկացնել սպառողին:» [ընդգծումը և մեջբերումը մերն են]

Նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն. «Վաճառողի (կատարողի) կողմից սպառողների կյանքի, առողջության և գույքի համար վտանգ ներկայացնող ապրանքների իրացման (աշխատանքի կատարման) համար վաճառողը (կատարողը) պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»

Նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն. «1. Արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ **անհրաժեշտ և ստույգ** տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը: Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը սահմանում է կառավարությունը:

2. Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր կարգով պետք է պարունակի՝

....

բ) տեղեկություններ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) **հիմնական սպառողական հատկությունների մասին,**

....

ե) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արդյունավետ և **անվտանգ օգտագործման կանոնները և պայմանները.**

ը) սույն օրենքին համապատասխան՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) սահմանված ծառայության կամ **պիտանիության ժամկետը**, ինչպես

նաև նշված ժամկետների ավարտից հետո սպառողի անհրաժեշտ գործողությունների և այդպիսի գործողությունների չկատարման դեպքում՝ հնարավոր հետևանքների մասին տեղեկությունները, եթե ապրանքները (աշխատանքները) նշված ժամկետների ավարտից հետո վտանգ են ներկայացնում սպառողի կյանքին, առողջությանը և գույքին կամ իր նշանակությամբ օգտագործման համար դառնում են ոչ պիտանի, ...»

....

ը) տեղեկատվություն՝ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համապատասխանության հավաստման մասին.

....

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը հասցվում է սպառողին ի գիտություն՝ ապրանքներին (աշխատանքներին, ծառայություններին) կցվող տեխնիկական փաստաթղթերով, պիտակների վրա, մականշվածքով կամ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների համար ընդունված այլ եղանակներով, ներառյալ՝ գովազդի բոլոր միջոցները: Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համապատասխանության հավաստման մասին տեղեկատվությունն սպառողին ներկայացվում է սահմանված կարգով մականշված՝ համապատասխանության նշանի ձևով և տեխնիկական փաստաթղթերում համապատասխանության փաստը հավաստող նշումով (սերտիֆիկատի համարը, դրա գործողության ժամկետը, այն տվող մարմինը կամ համապատասխանության մասին հայտարարագրի համարը, գործողության ժամկետը, այն վավերացնող մարմինը):...» [ընդգծումները մերն են]:

Համաձայն ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18 գնման ընթացակարգի հրավերի 4.3 կետի. «4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

...

2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մականիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մականիշ ունեցող ապրանքներ: ... » [ընդգծումը մերն է]

Մեջբերված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ մասնակիցը պարտավոր է առաջարկող ապրանքի նկարագիրը ներկայացնել ամբողջությամբ և այնպիսի հստակությամբ, որ բացառի ապրանքի տարակերպ մեկնաբանությունը թե՛ պատվիրատուի, թե՛ մասնակիցների, և թե՛ սպառողների շրջանում: Առաջարկվող ապրանքի նկարագիրը պետք է համապատասխանի հրավերով սահմանված պահանջներին: Մասնավորապես, եթե ապրանքի ամբողջական նկարագրի աղյուսակը նախատեսում է ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ, արտադրող ընկերություն դաշտեր, ապա մասնակիցը պարտավոր է դրանք լրացնել ըստ նշանակության: Ընդ որում, եթե թվարկումը տարանջատված է ստորակետերով, ապա անհրաժեշտ և բավարար է յուրաքանչյուրի և բոլորի առկայությունը: Այսինքն մասնակիցը չի կարող նշել միայն ֆիրմային անվանում, սակայն չնշել մակնիշ (օրինակ՝ ապրանքի մոդելը: Մեկ մոդելի համար կարող են աշխատել տարբեր շաքարաչափի սարքեր (*տե՛ս նկար 1*): Gmate PS-004 մոդելի շաքարաչափի թեստ-երիզները աշխատում են մի քանի շաքարաչափի սարքերով: Դրանք են՝

- K113636 - Gmate VOICE™ Blood Glucose Monitoring System
- K141656 - Gmate® Mini Blood Glucose Monitoring System
Gmate® Step Blood Glucose Monitoring System,
- K150299 - Gmate SMART Blood Glucose Monitoring System,
- K151658 - Gmate Origin Blood Glucose Monitoring System

Սակայն առկա է նաև Gmate PS-003 մոդելի շաքարաչափի թեստ-երիզներ, որոնք աշխատում են կոնկրետ շաքարաչափի սարքերի՝ Gmate plus-ի հետ, Gmate Life-ի թեստ-երիզները աշխատում են բացառապես Gmate Life շաքարաչափի սարքերի հետ),

Նկար 1

https://accessgudid.nlm.nih.gov/devices/08809301161029

NIH U.S. NATIONAL LIBRARY OF MEDICINE

ACCESS GUDID
IDENTIFY YOUR MEDICAL DEVICE

Enter Device Identifier, Name, or Company

DEVICE: **Gmate® Blood Glucose Test Strips (08809301161029)**

VIEW ALL SECTIONS | CLOSE ALL SECTIONS

DEVICE IDENTIFIER (DI) INFORMATION

Brand Name: Gmate® Blood Glucose Test Strips
 Version or Model: PS-004
 Commercial Distribution Status: In Commercial Distribution
 Catalog Number:
 Company Name: PHILOSYS Co., Ltd
 Device Description: No description.

Primary DI Number: 08809301161029
 Issuing Agency: GS1
 Commercial Distribution End Date:
 Device Count: 25
 Labeler D-U-N-S® Number*: 690184887 *Terms of Use

⊕ GMDN [2]
 ⊕ FDA PRODUCT CODE [2]
 ⊖ FDA PREMARKET SUBMISSION

FDA Premarket Submission Number [?]	Supplement Number [?]
K113636	000
K141656	000
K150299	000
K151658	000

Device Exempt from Premarket Submission: No

հաշվի առնելով, որ միայն մեկ արտադրող ընկերության թեստ-երիզներ է առաջարկում: Նշենք նաև, որ 25.03.2021թ. օրենսդրական փոփոխություններից հետո թույլ է տրվում ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև մեկ արտադրողի կողմից արտադրված տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ: Սա նպատակ է հետապնդում հնարավորինս յուրաքանչյուր ապրանքի համար տրամադրել սպեցիֆիկ և հստակ տեխնիկական բնութագիր՝ առավելագույնս բացառելով տարընկալումը: Այլ ոչ թե ընդհանրապես չհստակեցնել ո՛չ տրամադրվող շաքարաչափ սարքերը, ո՛չ թեստ-երիզները: Դա արդեն տանում է անորոշության, տարակերպ ընկալման դաշտ, որը ոչ մի ձև չի պարտավորեցնում մասնակցին արդեն պայմանագրի կատարման փուլում ներկայացնել կոնկրետ ապրանք, որով վերջինս մասնակցել է մրցույթին:

Մասնակցի հայտը, հրավերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, ենթակա է մերժման և հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ամբողջական տեղեկատվության տրամադրումը ունի կարևոր նշանակություն ոչ միայն մրցութի մասնակցության համար, այլ նաև իր վերջնական նպատակի՝ սպառողների

անորոշ շրջանակի առողջական կարիքների բավարարման համար: Եվ մրցույթի ժամանակ տրամադրելով ոչ լիարժեք, ոչ հստակ, ոչ ճշգրիտ բնութագիր՝ մասնակիցը կարող է անուղղակի կերպով վտանգել սպառողների անորոշ շրջանակի առողջությունը և կյանքը՝ չարտացոլելով սպառողի ստույգ առողջական վիճակը:

ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18 գնման ընթացակարգի հրավերի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է պայման, համաձայն որի թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշել է, որ թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Սակայն բաց տեղեկատվական հարթակներում առկա պաշտոնական տվյալները այլ բան են ապացուցում: Մասնավորապես Gmate-ի պաշտոնական կայքում¹ առկա է օգտագործման ձեռնարկ, որի առաջին էջում նշված է, որ անրաժեշտ է ֆիքսել այն ամսաթիվը, երբ առաջին անգամ բացվում է սրվակը: Ընդ որում նշվում է, որ թեստ-երիզները պիտանի են օգտագործման բացելու պահից 3 ամիս (*տե՛ս նկար 2, որը արտադրված է օգտագործման ձեռնարկի առաջին էջից*): Սակայն PM301-AM0-2100 օգտագործման ձեռնարկում բացակայում է այն կետը, որը սահմանում է բացման պայմանը՝ մոլորեցնելով հայաստանյան սպառողներին և առաջացնելով վտանգ սպառողների կյանքին և առողջությանը: Ստացվում է, որ անմիջապես արտադրողի կողմից հրապարակված էլեկտրոնային օգտագործման ձեռնարկում նշվում է, որ պիտանիության ժամկետը փոխվում է բացելուց հետո, իսկ այն օգտագործման ձեռնարկում (*տե՛ս նկար 2.1*), որը տրամադրվում է շաքարաչափ սարքերի և/կամ թեստ-երիզների հետ, որն անմիջականորեն օգտագործվում է սպառողի կողմից, հեռացված է այդ ինֆորմացիան:

նկար 2

Performing the Test

Be sure to have these items ready before you test:


- Gmate™ Voice Meter
- Gmate™ Test Strips
- Lancing Device
- Sterile Lancets

Important

- Gmate™ Voice Meter works only with Gmate™ Test Strips.
- Make sure the meter and test strips are about the same temperature before you test. Room temperature is recommended.
- Store unused test strips in their original vial only.
- **Do not** open the test strip vial until you are ready to perform a test.
- Write the date you first opened the vial on the label. The test strips are only good for three months from then.
- Close the test strip vial immediately after use to avoid damage from humid environments.
- **Do not** re-use or share a test strip that has blood or control solution applied. Test strips are for single use only.




նկար 2.1



Նույնը կարող ենք տեսնել նաև Gmate թեստ-երիզներն ու գլուկոմետրներն արտադրող ընկերության՝ Philosys – ի կայքում: Այնտեղ տեղադրված է օգտագործման մեկ այլ ձեռնարկ, ավելի ծավալուն և համապարփակ ինֆորմացիա տրամադրող, որը վերաբերում է Gmate Voice շաքարաչափ սարքերի միջոցով Gmate թեստ-երիզների օգտագործման

կանոններին: Անցնելով հղումով, կտեսնենք, որ ձեռնարկի 47-րդ էջում (*տե՛ս նկար 3*) նշված է, որ Gmate թեստ-երիզները և որակի ստուգման լուծույթը ունեն իրենց սրվակի վրա տպված պիտանիության ժամկետ: Երբ դուք առաջին անգամ բացում եք թեստ-երիզները և որակի ստուգման լուծույթը, անհրաժեշտ է անմիջապես արձանագրել պիտանիության ժամկետի ավարտը՝ առաջին անգամ **բացելու պահից 3 ամիս անց**:

նկար 3



CARING FOR THE GMATE® VOICE 47

Storing Your System

- Store your meter, strips and control solution in your carrying case after each use.
- Store each item in a cool, dry place below 90°F (32°C). Do NOT refrigerate.
- Keep all items away from direct sunlight and heat.
- Tightly close the cap on the test strip vial and/or control solution vial immediately after use to avoid contamination or damage. Store test strips only in their original vial.

Checking the Expiration of Strips and Control Solution

The Gmate® Test Strips and Control Solution have expiration dates printed on the vials. When you first open the test strip and control solution vials, immediately record the discard date, 3 months after first opening, on the vial labels.


Caution

- Do NOT use the test strips or control solution after the expiration date, discard date (date first opened plus 3 months), whichever comes first, or your results may be inaccurate.
- Do NOT use test strips if the vial is damaged or left open to air. This could lead to inaccurate test results and error messages.

www.Gmate.com Call Customer Service Toll Free at 855-GO-GMATE (855-464-6283) / 24 hours a day, 7 days a week.

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ Philosys արտադրող ընկերության Հարավային Կոլեայի թեժ գիծ զանգահարելիս (հեռախոսահամարը՝ +82806531421) նույնպես տրամադրվում է նույն ինֆորմացիան: Այն է՝ Gmate թեստ-երիզներն ունեն պիտանիության ժամկետ՝ **բացելու պահից 3 ամիս**:

Ռուսական շուկայում առկա են Gmate Life շաքարաչափ սարքերը, որոնք աշխատում են բացառապես Gmate Life թեստ-երիզների հետ: Այս դեպքում էլեկտրոնային օգտագործման ձեռնարկում բացակայում է բացման պայմանը, սակայն վաճառքի ենթակա թեստ-երիզների տուփում առկա օգտագործման ձեռնարկում նշված է **բացման պայման, այն է՝ 3 ամիս** (*տե՛ս նկարի 4-ի 2.5 կետը*): Սա նշանակում է, որ փաստացի, վերջնական սպառողը չի գտնվում մոլորության մեջ արտադրողի և/կամ վաճառողի և/կամ մատակարարի կողմից: Իր կողմից գնված ապրանքի օգտագործման ձեռնարկում առկա է պայման, համաձայն որի թեստ-երիզները պիտանի են օգտագործման **բացելու պահից 3 (երեք) ամիս**:



Ինչպես արդեն նշել էինք, Gmate շաքարաչափի թեստ-երիզները աշխատում են մի քանի շաքարաչափ սարքերով: Դրանք են՝

- K113636 - Gmate VOICE™ Blood Glucose Monitoring System
- K141656 - Gmate® Mini Blood Glucose Monitoring System
Gmate® Step Blood Glucose Monitoring System,
- K150299 - Gmate SMART Blood Glucose Monitoring System,
- K151658 - Gmate Origin Blood Glucose Monitoring System

Անցնելով հղումներով, կտեսնեք, որ նշված փաստաթղթերից յուրաքանչյուրի 6-րդ էջում նշված է թեստ-երիզների կայունություն կետը (test-strip stability), որտեղ վերոնշյալ բոլոր տեսակների համար սահմանված է **պիտանիության ժամկետ բացելուց հետո 3 ամիս:**

Օրինակ՝ Gmate origin շաքարաչափի սարքերով աշխատող թեստ-երիզներին, ապա նրանց համար նույնպես սահմանված է պիտանիության ժամկետ՝ բացելու պահից 3 ամիս. (Տե՛ս նկար 5)

Այդ փաստաթղթերի հղումներով անցնելով, կտեսնենք նաև, որ 2-րդ էջի 2-րդ պարբերությունում նշված է, թե որ շաքարաչափի թեստ-երիզները որ շաքարաչափ սարքերի հետ են աշխատում:

c. Traceability, **Stability**, Expected values (controls, calibrators, or methods):

Traceability

The Gmate Origin Blood Glucose Monitoring System is traceable to NIST SRM 917b. The method comparison study was performed using the candidate device and YSI as the reference method (see Section 2.a.)

Test Strip **Stability**

Test strip **stability** was established in k113636 to support the sponsor's claim of 24 month shelf life and 3 month open vial **stability** when stored at 36°F to 90°F (2°C to 32°C) and relative humidity of 10% to 90%.

Վերոգրյալ ապացույցները ամբողջությամբ փաստում են այն մասին, որ **Gmate թեստ-երիզների պիտանիության ժամկետը փոխվում է բացելուց հետո:**

Այդ փաստը մինչև անգամ տեղ է գտել ամերիկյան հայտի FDA (Food and Drug Administration) կազմակերպության պաշտոնական կայքում: Վերջինս 2020թ.-ի մայիսի 5-ին հրապարակել է նախազգուշական նամակ այն մասին, որ FDA կազմակերպությունը իրականացրել է զննում, որի արդյունքում պարզել է, որ Gmate թեստ-երիզները համարվում են «misbranded»: Դա նշանակում է, որ Gmate թեստ-երիզներ արտադրող Philosys ընկերությունը ձախողվել է կամ մերժել է ապահովել ինֆորմացիա այն մասին, որ թեստ-երիզները համապատասխանում են FDA կազմակերպության կողմից սահմանված կանոններին և իրենց կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրերին: FDA կազմակերպությունը նախազգուշական նամակում նշում է, որ 2016թ.-ի հունվարի 2-ից սկսված Philosys արտադրող ընկերությունում փոխվել է թեստ-երիզների օգտագործման ձեռնարկի տպագրողը: FDA կազմակերպությունը դա համարում է լուրջ փոփոխություն, որից հետո Philosys արտադրող ընկերությունը պետք է անցնի համապատասխան հետազոտություն: Միակ փաստաթուղթը **4-օրյա հետազոտության** արդյունքում ներկայացված արձանագրությունն է՝ իրականացված միայն GM10RFSO լոտի համար: Այն փաստում է, որ թեստ-երիզները արտադրման պահից ունեն 2 տարվա պիտանիության ժամկետ և **կարող են օգտագործվել բացելու պահից 3 ամսվա** ընթացքում: **Սակայն FDA կազմակերպությունը նշում է, 4-օրյա հետազոտությունը չի ապացուցում, որ Gmate թեստ-երիզները կապահովեն կայուն ճշգրիտ արդյունք պահպանման բոլոր պայմաններն ապահովելու դեպքում:** Philosys արտադրող ընկերությունը չի կարողացել ներկայացնել ապացույց ի հավաստումն նրա, ինչը որ նշված է թեստ-երիզների տեխնիկական բնութագրում: *(մեջբերված հարվածը տե՛ս նկար 6-ում, ամբողջական փաստաթուղթը՝ 13-րդ հղմամբ:)*

a. Your test strip sheet printing supplier was changed on January 2, 2016. Your firm's Design and Development Control Procedure requires that your firm perform full performance and stability testing after each major change, such as a sheet printing supplier change. However, the only documented performance or stability testing your firm completed was a stability study performed at room temperature over **(b)(4)** days. The Gmate Design History Record (DHR) for test strip lot GM10RFSO specifies that the test strips have a shelf life of two years at storage temperatures of 2-32 °C and can be used for **three months after the test** strip vial is opened according to the device label. The stability testing performed by your firm does not demonstrate that the test strips will give accurate results across the full storage and use conditions the device is specified for. Your firm could not provide any other evidence that the Gmate test strips from the new test strip sheet printing supplier met the performance specifications on the device label or in the DHR.

Վերոգրյալով արդեն պարզ է դառնում մեր ունեցած օգտագործման ձեռնարկներում առկա և պաշտոնական կայքերում հրապարակված օգտագործման ձեռնարկների տեղեկությունների միջև հակասությունների հիմնական պատճառը: **Փաստացի, պարզ է դառնում, որ չկա նույնիսկ երաշխիք, որ արտադրողը կապահովի կայուն ճշգրիտ արդյունքներ նույնիսկ բացելու պահից 3 ամսվա ընթացքում:**

Սխալ արդյունքներ ստանալու փաստը ապացուցվում է վերջնական օգտագործողների կողմից հրապարակված բողոքներով: Վերջիններս, դեռևս 2021թ.-ի փետրվարի 10-ին դիմել են ՀՀ առողջապահության նախարարին (նամակը կցվում է)² բարձրաձայնելով այն մասին, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացվող Gmate թեստ-երիզները ապահովում են սխալ արդյունք, ինչը վտանգ է ներկայացնում երեխաների կյանիքն և առողջությանը: Համեմատության համար չափումն իրականացրել են տարբեր սարքերով և թեստ-երիզներով: Սխալ ցուցանիշը անհայտ է դառնում՝ տեսնելով երեխայի մոտ առկա կլինիկական վիճակի և Gmate թեստ-երիզների ապահոված արդյունքի տարբերությունը²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Գնահատող հանձնաժողովը պատշաճ կերպով չի գնահատել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) հիմնավորվածությունը, ինչի արդյունքում եկել է սխալ եզրահանգման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊԶԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Փոփոխելու 15.06.2021թ. թիվ 2 արձանագրությամբ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը,

² <https://www.facebook.com/anna.tevanyan.1990/posts/1370394999981147>

2. Մերժելու «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը և համապատասխանաբար հաղթող ճանաչելու 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ի լրումն վերը շարադրված բողոքի՝ 01.07.2021թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲ ընկերության կողմից ս.թ. հունիսի 18-ին ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքի, ներկայացնում ենք բողոքին կցված փաստաթղթերի և բողոքում մեջբերված քաղվածքների հայերեն պատշաճ թարգմանությունները:

Եվս մեկ անգամ վերահաստատում ենք, որ Գնահատող հանձնաժողովը պատշաճ կերպով չի գնահատել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հիմնավորվածությունը, ինչի արդյունքում եկել է սխալ եզրահանգման: Մասնավորապես.

➤ Եթե ապրանքը ունի մակնիշ (ինչը ենթադրելի է, քանի որ 2019թ.-ին 2020թ.-ի համար կայացած ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով մրցույթին մասնակցելիս, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն նշել է մակնիշ, մասնավորապես շաքարաչափ թեստ-երիզների համար նշելով «Ջի Մեյթ Օրիջին» մակնիշը): Իսկ այս մրցույթին մասնակցելիս որևէ մակնիշ չի նշվել, սակայն թե՛ գների նվազեցման շուրջ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ, և թե՛ բողոքի քննության համար հրավիրված նիստի ժամանակ նշվել է, որ տրամադրվելու է նույն ապրանքը, ինչ նախորդ տարի: Մինչև անգամ Պատվիրատուի կողմից հնչեց բանավոր հայտարարություն, որ որակի հավաստման սերտիֆիկատներ չեն պահանջվել այն տրամաբանությամբ, որ նախորդ տարի արդեն ներկայացվել է նույն ապրանքի համար):

Միննույն ժամանակ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից նշվել է գների նվազեցման շուրջ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ, որ տրամադրվելու են Gmate «ունիվերսալ» թեստ-երիզներ (Ջի Մեյթ), որոնք աշխատում են Gmate ցանկացած մոդելի շաքարաչափ սաքերի հետ, և որ թեստ-երիզները չունեն մակնիշ: Սակայն մեր կողմից իրականացված փաստահավաք գործունեության ընթացքում պարզեցինք, որ մինչև անգամ այդ ունիվերսալ ստրիպներն ունեն մակնիշ, այն է՝ PS-004, որը աշխատում է հետևյալ սարքերի հետ.

- K113636 - Gmate VOICE™ Blood Glucose Monitoring System
- K141656 - Gmate® Mini Blood Glucose Monitoring System
- Gmate® Step Blood Glucose Monitoring System,
- K150299 - Gmate SMART Blood Glucose Monitoring System,

- K151658 - Gmate Origin Blood Glucose Monitoring System

Ուստի գտնում ենք, որ մակնիշը բավարար չափով հստակեցված չէ: ՀՀ ԱՆ ԳՀԱՊԶԲ-2021/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցած «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից չի երևում, թե վերջապես ինչ ապրանք է առաջարկում մասնակիցը, նախորդ տարվա նույն ապրանքը, թե՛ ունիվերսալ թեստ-երիզներ:

Ընդ որում, երկու դեպքում էլ մակնիշը ենթակա է հստակեցման: Հետևաբար առաջարկվող ապրանքը բավարար չափով մակնշված չէ և չի համապատասխանում հրավերով սահմանվող պահանջներին:

Ինչպես արդեն նշել էինք բողոքի իրավական հիմքերում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը պետք է **ամբողջությամբ և հստակ** նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ **բացառելով տարակերպ մեկնաբանությունը**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումը դադարեցնել, քանի որ ապրանքի մակնիշը նշված չլինելու դեպքում հնարավոր չէր լիարժեք ուսումնասիրել մասնակցի կողմից ներկայացված հայտը և գնահատել բավարար: Դա տարակերպ մեկնաբանության տեղիք է տալիս, ինչն անթույլատրելի է գնումների օրենսդրության համաձայն:

➤ Եվ երկրորդ ամենակարևոր հանգամանքը՝ այն է, որ տեխնիկական բնութագրի պայմանները չեն բավարարում հրավերով սահմանվող պահանջներին: Մասնավորապես թեստ-երիզները իրականում պիտանի են օգտագործման բացելու պահից 3 ամսվա ընթացքում: Ի հավաստումն ներկայացնում ենք արտադրողի Philosys (Ֆայլոսիս) ընկերության կայքից, Gmate-ի կայքից արտատպված, FDA ամերիկյան կազմակերպության կողմից հրապարակված նախազգուշացման գրությունը, ուսական շուկայում առկա Gmate life թեստ-երիզների օգտագործման ձեռնարկի հայերեն պատշաճ թարգմանությունները: Ուսումնասիրել ենք նաև PS-003 մակնիշի թեստ-երիզների տեխնիկական բնութագրերը, որոնք հղում են տալիս PS-004 մակնիշի օգտագործման ձեռնարկներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ ենք համարում լրացնել ԳԲԲԱ-ՆԳ-2021/41 բողոքը ևս մեկ պահանջով և վերաձևակերպել հետևյալ կերպ:

Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ Բողոքում տեղ է գտել տեխնիկական վրիպակ/տառասխալ: Մասնավորապես բողոքը ձևակերպելիս հղում է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» կետին, սակայն պետք է հղում տրվեր օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» կետին: Սա ձևական բնույթ կրող, տեխնիկական վրիպակ է, ուստի սույն գրությամբ ուղղում ենք մեր կողմից թույլ տրված տառասխալը/վրիպակը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 15.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը, քանի որ պատշաճ հստակությամբ մակնշված չէ ապրանքը, ինչը թույլ չի տալիս իդենտիֆիկացնել ներկայացվելիք ապրանքը մյուսներից:

2. Պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 15.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը, քանի որ փաստացի Gmate թեստերիզների պիտանիության ժամկետը փոխվում է բացելու պահից:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին մերժել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը և համապատասխանաբանար հաղթող ճանաչել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.06.2021թ. ժամը 09:10-ին և 13.07.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Այնուհետև՝ 16.07.2021թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված քաղվածքի՝ ներկայացնում ենք, որ այդ գրությամբ ևս մեկ անգամ վերահաստատվում է մեր բողոքի պահանջը, ըստ որի Gmate թեստ երիզները ունեն բացման պայման: Գիտությունն ապացուցել է, որ աշխարհում արյան մեջ գլյուկոզայի

մակարդակը որոշող թեստ-երիզները բաժանվում են 2 հիմնական խմբերի: Դրանք են՝ 1. Բացելու պահից պիտանիության ժամկետը մնում է անփոփոխ, 2. Բացելու պահից պիտանիության ժամկետը փոխվում է: Ձեր ներկայացրած գրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ Gmate թեստ-երիզների պիտանիության ժամկետը փոխվում է սրվակը բացելու պահից: Այսինքն այստեղ այստեղ էականը 3 կամ 4 ամիսը չէ, այլ այն, որ այս շաքարաչափ թեստ-երիզները մտնում են 2-րդ խմբի մեջ: Gmate շաքարաչափ թեստ-երիզները ստեղծված են այնպիսի տեխնոլոգիայով, որ նրանց պիտանիության ժամկետը փոխվում է բացելու պահից: Նույնիսկ եթե թեստ-երիզների մեջ բաղադրիչներն ավելի խտացվեն և դառնան այդ խմբի մեջ մտնող թեստ-երիզների համար թույլատրելի 4 ամիսը, միևնույնն է, դրանք կրկին չեն համապատասխանում ՀՀ ԱՆ ԳՀԱՊԶԲ-2021/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին, այն է՝ թեստ-երիզների պիտանիության ժամկետը պետք է մնա անփոփոխ: Ինչպես արդեն նշեցինք, Ձեր ներկայացրած գրությունը քաղվածք է, այսինքն ունի սկիզբ և շարունակություն: Հետևաբար այս իմաստով փոքր ինչ դժվար է կռահել ամբողջական միտքը, քանի որ ընդհանուր միտքը ըմբռնելու համար անհաժեշտ է ուսումնասիրել ինֆորմացիան ամբողջությամբ, անհրաժեշտության դեպքում իր հետ կցված փաստաթղթերի հետ միասին: Ներկայացված անգլերեն քաղվածքի բովանդակությունից միայն պարզ է դառնում, որ արտադրողի կողմից անհրաժեշտ նյութը խտացնելու դեպքում հնարավոր է դարձել պիտանիության ժամկետը հասցնել բացելու պահից 4 ամսի: Միևնույն ժամանակ նշենք, որ մենք լրացուցիչ փորձեցինք փնտրել և գտնել, թե ինչ ձեռնարկի մաս է կազմում Ձեր կողմից հայնաբերված քաղվածքը, որպեսզի համոզվեինք մեր ենթադրությունների մեջ: Արդյունքում հայտնաբերեցինք, որ այն Philosys արտադրողի կայքում առկա ինֆորմացիան է, որին մենք անդրադարձել էինք մեր բողոքում¹ (տե՛ս նկար 1): Նկարի ամենաներքևի հատվածում առկա է «Download user manual», որը հայերեն թարգմանաբար նշանակում է «ներբեռնել օգտագործման ձեռնարկը»² (Մենք մեր բողոքում անդրադարձել էինք նաև այդ օգտագործման ձեռնարկին (Gmate Voice արյան ինքնահսկման համակարգի օգտագործման ձեռնարկին) , ներկայացրել էինք նաև այդ ձեռնարկի վերաբերելի հատվածի պատշաճ վավերացված հայերեն թարգմանությունը): Ձեր ուշադրությունը ևս մեկ անգամ հրավիրելու համար այս գրությանը նույնպես կցում ենք¹ Philosys արտադրող ընկերության պաշտոնական կայքում առկա Gmate թեստ-երիզների օգտագործման ձեռնարկի պատշաճ վավերացված հայերեն թարգմանությունը:

Հաշվի առնելով և ամփոփելով վերոգրյալը՝ ևս մեկ անգամ փաստում ենք, որ անկախ նրանից, թե թեստ-երիզների ժամկետը բացելու պահից 3 թե 4 ամիս կլինի, առանցքայինն այն է, որ բացելու պահից պիտանելիության ժամկետը ինչ որ X ժամկետից հետո ենթակա է փոփոխման: Ուստի արյան մեջ գլյուկոզայի մակարդակը որոշող թեստ-երիզները մտնում են 2-րդ խմբի մեջ և չեն համապատասխանում ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին, այն է՝ թեստ-երիզների պիտանելիության ժամկետը պետք է մնա անփոփոխ»:

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ առողջապահության նախարարությունը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.06.2021թ. թիվ Մ-26064-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2021 թվականի հունիսի 21-ի Ձեր թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10104-2021 գրության՝ Առողջապահության նախարարությունը ներկայացնում է իր դիրքորոշումը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի բողոքի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ Առողջապահության նախարարությունը չի ընդունում բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկները: Մասնավորապես, այն դիտարկմանը, թե «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշը՝ թեստ-երիզների ժամկետը չի փոփոխվում անկախ տուփի բացման պայմանից չի համապատասխանում իրականությանը: Նշված փաստարկը գնման ընթացակարգի այս փուլի ընթացքում հիմնավոր չէ, քանի որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից հաստատված և ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանված չափանիշներին և գնահատվել է բավարար:

Միաժամանակ հայտնում են, որ Առողջապահության նախարարությունը խնդրում է քննության առարկա չդարձնել բողոքաբերի ներկայացրած փաստարկները 2020 թվականի «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերի կատարման վերաբերյալ, քանի որ գտնում է, որ այն դուրս է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.06.2021թ. ժամը 09:10-ին և 13.07.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 25.06.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.06.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 18.06.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

✓ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար՝ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

✓ Ընթացակարգի գնման առարկան է հանդիսացել արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստը:

✓ Ընթացակարգի հրավերի հավելված 1.1-ով սահմանվել է առաջարկվող ապրանքի նկարագրի հետևյալ ձևաչափ.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	Մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

✓ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ թեստերիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից:

✓ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն, «ԱՄ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ն, «Մեդպրո» ՍՊԸ-ն և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

✓ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության.

○ 5-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Հրավերի 7.6 և 7.7 կետերը, որոշվել է կասեցնել գնման ընթացակարգը և մասնակիցներին հրավիրել բանակցությունների /ոչ ավտոմատ ծանուցման միջոցով armeps համակարգի միջոցով/:

Բանակցությունների օրը՝ 09.06.2021թ. ժամը 15:00-ին իրենց մասնակցությունն են ապահովել՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված՝ Պարույր Վասիլյանը և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից լիազորված՝ Զառա Սարգսյանը և Սառա Աղաբեկյանը: Բանակցությունների մեկնարկից հետո մինչև ավարտը «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչների կողմից ներկայացվեց նոր գնային առաջարկ:

○ 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անճշտություններ և «ԱՄ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ին, «Մեդպրո» ՍՊԸ-ին և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին առաջարկվել է մեկօրյա ժամկետում հրավերի հավելված 1.1 կատարել ճշտում/շտկել ֆիրմային անվանումները և առաջարկվող ապրանքի տուփի մեջ հստակ քանակը/։ Բոլոր ծանուցված կազմակերպությունները մեկօրյա ժամկետում կատարել են ճշտումները և «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ուղարկել շտկված հավելվածները:

○ 9-րդ կետի համաձայն՝ որոշվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին:

✓ Պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել են հետևյալ գները.

Մասնակիցների տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ.դրամ/
1	«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ	X	42,775.0

2	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ		54,375.0
---	-------------------------	--	----------

✓ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն ներկայացրել է 12 մլն. ՀՀ դրամով ավելի բարձր գնային առաջարկ, քան «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն:

✓ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 18.06.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքով խնդրել է է մերժել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը և համապատասխանաբար հաղթող ճանաչել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին:

✓ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն 18.06.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքի հիմքում դրել է երկու փաստարկ. ա) «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի ամբողջական նկարագրում չի նշվել առաջարկվող ապրանքի մակնիշը, բ) «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված այն պահանջին, որ թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Ըստ Բողոքաբերի՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված թեստ-երիզները պիտանի են՝ տուփը բացելուց հետո 3 ամիս: Որպես ապացույց ներկայացվել են տարբեր կայքերից արտատպումներ:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ա) «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի ամբողջական նկարագրում չի նշվել առաջարկվող ապրանքի մակնիշը

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն 18.06.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքով որպես «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմք դրել է այն փաստարկը, որ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի ամբողջական նկարագրում չի նշվել առաջարկվող ապրանքի *մակնիշը*:

Բողոքում որպես հիմնավորում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել են Հարավային Կորեայի Ֆայլոսիս ընկերության Ջի Մեյթ թեստ-երիզներ, որոնք, ըստ Բողոքաբերի, լինում են տարբեր մակնիշի: Որպես մակնիշ Բողոքաբերի կողմից նշվել է, որ Հարավային Կորեայի արտադրության Ջի Մեյթ թեստ-երիզները լինում են տարբեր մակնիշների, օրինակ Ջի Մեյթ Օրիջին (Gmate Origin), Ջի Մեյթ Ոյս (Gmate Voice), Ջի Մեյթ ՊՍ-003 (Gmate PS-003), Ջի Մեյթ ՊՍ-004 (Gmate PS-004):

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ջի Մեյթ թեստ-երիզները չունեն մակնիշ, և դա ակնհայտ երևում է թե՛ Ֆայլոսիս ընկերության կայքից և թե՛ Ջի Մեյթ թեստ-երիզների օգտագործման հրահանգից (Instruction of Gmate Blood Glucose Test Strips, կցվում է): Մասնավորապես, բոլոր տեղեկատվական բազաներում Ջի Մեյթ թեստ-երիզները նշված են որպես ` Ջի Մեյթ թեստ-երիզ (առանց որևէ մակնիշի նշման): Նույն Ջի Մեյթ թեստ-երիզի օգտագործման հրահանգում որպես անվանում նշված է ուղղակի Ջի Մեյթ թեստ-երիզ` առանց մակնիշի նշման, քանի որ նշված ընկերության արտադրության թեստ-երիզը չունի մակնիշ: Ավելին, օգտագործման հրահանգում նշված է, որ Ջի Մեյթ թեստ-երիզը ունիվերսալ է և կարող է օգտագործվել Ջի Մեյթ բոլոր գլուկոմետրերի համար, օրինակ Ջի Մեյթ Օրիջին և Ջի Մեյթ Ոյս սարքերի համար:

Այս տեսանկյունից հիմնավոր չէ Բողոքաբերի կողմից որպես օրինակ բերված իբրև թե Ջի Մեյթ Օրիջին կամ Ջի Մեյթ Ոյս մակնիշի թեստ-երիզները, քանի որ վերոհիշյալը հանդիսանում են ոչ թե թեստ-երիզի, այլ Ջի Մեյթ գլուկոմետր սարքերի մակնիշներ, և ինչպես նշեցինք, բոլոր մակնիշի սարքերում կարող են օգտագործվել ունիվերսալ Ջի Մեյթ թեստ-երիզները` Gmate Blood Glucose Test Strips:

Ինչ վերաբերվում է Բողոքաբերի կողմից որպես Ջի Մեյթ թեստ-երիզի համար

հնարավոր մոդել նշված PS-003 կամ PS-004, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ նշված PS-003 կամ PS-004 հանդիսանում է ոչ թե ապրանքի մոդելը/մակնիշը, այլ ըստ նույն օգտագործման հրահանգի՝ թեստում առկա նյութի անվանումը (Ingredient – PS-003, PS-004):

Ի հավաստումն այն փաստի, որ նշված թեստ-երիզները չունեն մակնիշ, լրացուցիչ ներկայացվում է նաև EC Certificate, որտեղ որպես թեստ-երիզի անվանում նշված է ընդամենը Gmate Blood Glucose Test Strips:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հենց Բողոքաբերի կողմից ներկայացված արտատպումներում է նշված ընդամենը Gmate Blood Glucose Test Strips (Gmate թեստ-երիզ), իսկ մոդելները արդեն նշված են սարքերի համար, որոնց համար արտադրվում են այդ ունիվերսալ թեստ-երիզները (նայել ՓԲԸ-ի ներկայացրած թարգմանության՝ քաղվածք Ջի Մեյթ, Քաղվածք թղթայինից, Origin և մյուս թարգմանված փաստաթղթերում):

Վերոհիշյալով պայմանավորված՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես իր կողմից առաջարկված թեստ-երիզի մոդել նշվել է միայն Ջի Մեյթ, քանի որ վերոհիշյալ թեստ-երիզները, չունեն մակնիշ:

բ) «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պիտանիության ժամկետի պահանջին:

Ըստ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Ըստ Բողոքաբերի՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված թեստ-երիզները պիտանի են՝ տուփը բացելուց հետո 3 ամիս: Որպես ապացույց ներկայացվել են տարբեր կայքերից արտատպումներ:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Ջի Մեյթ թեստ-երիզները (Gmate Blood Glucose Test Strips) պիտանի են՝ տուփը բացելուց հետո առանց ժամկետի սահմանափակման:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ Ձեզ ենք ներկայացնում Ֆայլոսիս ընկերության գրությունը առ այն, որ Ջի Մեյթ թեստ-երիզների (Gmate Blood Glucose Test Strips) ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից:

Նույն տեղեկատվությունը հավաստվում է նաև «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Ջի Մեյթ թեստ-երիզների (Gmate Blood Glucose Test Strips) օգտագործման

հրահանգը, որտեղ չկա նշում առ այն, որ թեստ-երիզները պիտանի են՝ տուփը բացելուց հետո 3 ամիս: Ավելին, սահմանված է, որ պիտանի են՝ տուփը բացելուց հետո անժամկետ:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Gmate Blood Glucose Test Strips արտադրող Ֆայլոսիս ընկերությանը ուղարկվել է Հրավերի տեխնիկական բնութագիրը, և Ֆայլոսիս ընկերությունը պարտավորվել է արտադրել այնպիսի թեստ-երիզներ, որոնց ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Վերոհիշյալը պայմանավորված է թեստ-երիզում առկա նյութի պարունակությամբ և խտությամբ:

Ինչ վերաբերվում է Բողոքաբերի կողմից ներկայացված Center for Devices and Radiological Health (Սարքերի և ճառագայթային առողջության կենտրոն) ամերիկյան կազմակերպության նախազգուշական նամակին, որում արվում են դիտողություններ Ֆայլոսիս ընկերության արտադրանքի մասով, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ Ֆայլոսիս ընկերության նշված արտադրանքը գրանցված է ԱՄՆ սննդի և դեղերի վերահսկման վարչության կողմից (հղումը այստեղ՝ https://www.accessdata.fda.gov/scripts/cdrh/cfdocs/cfRL/rl.cfm?start_search=1&showList=1&establishmentName=®Num=&StateName=&CountryName=&OwnerOperatorNumber=10043752&OwnerOperatorName=&ProductCode=&DeviceName=&ProprietaryName=&establishmentType=&PAGENUM=10&SortColumn=EstablishmentName20%25ASC&RegistrationNumber=3014848701):

Հայտնում ենք, որ ԱՄՆ սննդի և դեղերի վերահսկման վարչությունը (Food and Drug Administration, FDA) հանդիսանում է ԱՄՆ առողջապահության նախարարության գործակալությունը, որի ղեկավարին նշանակում է ԱՄՆ Նախագահը, և որի գլխավոր առաքելությունն է դեղորայքի, բժշկական սարքերի գրանցումը և նրանց որակի նկատմամբ վերահսկողությունը: Ուստի եթե Ֆայլոսիս ընկերության կողմից արտադրվող արյան մեջ գլյուկոզայի որոշման համակարգերը ունենաին որակի խնդիր, ապա վերոհիշյալ գործակալության կողմից կկիրառվեին համապատասխան պատժամիջոցներ, ընդուպ մինչև գրանցումը անվավեր ճանաչելը, ինչը առկա չէ:

Ուստի նման պայմաններում Center for Devices and Radiological Health կառույցից ներկայացրած ինչ-որ նամակ չի կարող հիմք հանդիսանալ Ֆայլոսիս ընկերության կողմից արտադրվող արյան մեջ գլյուկոզայի որոշման համակարգերը արատավորելու համար:

գ) «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Զի Մեյթ թեստ-երիզների որակի

վերաբերյալ

Ներկայացված բողոքի քննության նիստի ժամանակ բողոքաբերի կողմից մատնանշվեցին, թե իբրև թե հանրային աղմուկի արդյունքում պարզվել է, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Gmate Blood Glucose Test Strips անորակ են և սխալ են ցույց տալիս իրական պատկերը:

Այս կապակցությամբ ներկայացնում ենք «Հաղթենք դիաբետը միասին» հիմնադրամի տնօրեն Խ.Հովհաննիսյանի 08.07.2021թ. գրությունը, որից պարզ է դառնում, որ վերոհիշյալ "աղմուկը" արիեստաձին է և չի համապատասխանում իրականությանը:

Ավելին, Facebook համապատասխան հարթակների ուսումնասիրությունը, որտեղ տեղի է ունեցել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Gmate Blood Glucose Test Strips որակի քննադատությունը (այստեղից էլ վերցվել նաև ՀՀ առողջապահության նախարարին ուղղված նամակի արտատպումը), վկայում է, որ քննադատության են ենթարկել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի առաջարկվող ապրանքը այն FB օգտատերերը, որոնք նույն էջի միջոցով զբաղվում են «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվող թեստ-երիզների վաճառքով (համապատասխան արտատպումները կցվում են):

Վերոհիշյալը, ինչպես նաև սույն բողոքը վկայում են «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից անբարեխիղճ մրկացության մասին:

Ըստ երևույթի՝ վերոհիշյալը պայմանավորված է նրանով, որ տարիներ ի վեր «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից պետական գնման ոլորտում մատակարարվել են բարձր գին ունեցող թեստ-երիզներ, իսկ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից վերջին ընթացքում Ֆայլոսիս ընկերության կողմից որակյալ, բայց մատչելի գնով թեստ-երիզներ առաջարկելու հետևանքով Բողոքաբերը, ըստ էության, զրկվել է գնման ընթացակարգերով հաղթող մասնակից դառնալու և պետական բյուջեի միջոցների հաշվի գերշահույթ ստանալու հնարավորությունից, ինչի հետևանքով ՓԲԸ-ն արատավորում է և՛ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի, և՛ Ֆայլոսիս ընկերության բարի համբավը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն որակյալ և Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող արտադրանք առաջարկելով, այնուամենայնիվ առաջարկել է 12 մլն ավելի էժան գին, քան «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ինչը էական խնայում է պետության ներկայիս ծանր տնտեսական պայմաններում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է մերժել «Կոնցեռն-

Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 18.06.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/41 բողոքը:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.06.2021թ. ժամը 09:10-ին և 13.07.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

Ինչպես նաև «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն 13.07.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստին ապահովել է «Հաղթենք դիաբետը միասին» հիմնադրամի տնօրեն Խ.Հովհաննիսյանի մասնակցությունը, ով պնդել է 08.07.2021թ. ներկայացված գրությամբ հայտնած դիրքորոշումը, այն է՝

«Հիմնադրամի առաքելությունն է՝ օժանդակել ՀՀ-ում շաքարային դիաբետ ունեցող մարդկանց կյանքի որակի բարելավմանը և հնարավորինս կանխել շաքարային դիաբետի առաջացումը: Հիմնադրամի և ՀՀ առողջապահության նախարարության միջև ստորագրված է հուշագիրը, որով 2015 թ. նոյեմբերից մեկնարկեց «Վերահսկիր դիաբետը, ապրի՛ր լիարժեք կյանքով» ծրագիրը՝ ընդգրկելով Հայաստանում, Արցախում, Ջավախքում ապրող 0-29 տարեկան տիպ 1 շաքարային դիաբետ ունեցող բոլոր երեխաներին և երիտասարդներին (մոտ 1300 հոգի): Ծրագրի շրջանակներում բացվել են դիաբետի ուսուցման չորս կենտրոններ, որոնցից երեքը Երևանում, իսկ մեկը Գյումրիում: Ծրագրի շրջանակներում մինչ օրս շահառուներն անվճար ստանում են աշխարհում լավագույնը համարվող ինսուլինային անալոգներ, գրիչ-ներարկիչներ, նրանց համար նախատեսված ասեղներ, արյան մեջ գլյուկոզայի չափման սարքեր և դրանց թեստ-երիզները, որոշվում է գլիկոլիզացված հեմոգլոբինի ցուցանիշը, ստանում են հոգեբանի խորհրդատվություն, շարունակական մասնակցում են դիաբետի կրթությունն ապահովող դասընթացներին, յուրաքանչյուրն ունի հանրամատչելի գրքույկ-ձեռնարկներ դիաբետի մասին և ամենօրյա օրագրեր, «Հումիի համակարգչային կրթական խաղ»-ի միջոցով ավտոմատացվում է վերահսկումը, պարբերաբար այցելում ենք մարզեր, կազմակերպում էքսկուրսիաներ, յուրաքանչյուր տարի հասարակության իրազեկման նպատակով նոյեմբերի 14-ին նշում Դիաբետի Միջազգային Օրը:

Հաշվի առնելով մեր ծրագրի շրջանակներում ստացվող արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման սարքերի և նրանց թեստ-երիզների շուրջ վերջերս ծավալված աղմուկը, ինչպես նաև հանդես գալով Առողջապահության նախարարության կողմից լիազորված կազմակերպություն, որիս առաքելությունն է ապահովել ծրագրի ընթացքի

անվրեպ աշխատանքը և շահառուների շահերը, ապա սույն գրությունով կներկայացնեմ ստեղծված իրավիճակն այլ տեսանկյունից:

Ծրագրի շրջանակում Gmate ֆիրմայի գլուխավորից օգտվում են արդեն 700 առաջին տիպի դիաբետ ունեցող երեխա: Նախնական դժգոհություններն անուղղակի ստացվեցին 4-5 ծնողի կողմից: Անձամբ ունեցել եմ հեռախոսազրույցներ և հանդիպումներ բոլորի հետ, որի արդյունքում խնդիրը ոչ ճիշտ օգտագործման մեջ էր: Հաջորդ հոսքն ինձ ստիպեց ավելի լուրջ մոտենալ խնդրին: Բոլոր խնդիր «առաջացրած» գլուխավորները տարել եմ լաբորատոր հետազոտության՝ արյան նույն կաթիլով գլուխավորի մակարդակը որոշվել է այլ ֆիրմայի ապարատներով և երակային արյունով: Արդյունքները եղել են անթերի՝ գլուխավորների շեղումների թույլատրելի սահմաններում: Որպես փոքրիկ նշում ասեմ, որ Gmate ֆիրմայի գլուխավորի արդյունքը միշտ ամենամոտն է եղել լաբորատոր հետազոտության երակային արյան ցուցանիշին, որը վկայում է ապարատի ժամանակակից տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը:

Ընթացքում առաջացած դժգոհությունների վերլուծությունը հանգեցնում է ցավալի եզրակացության՝ խնդիրները հիմնականում առաջանում են ապարատի սխալ օգտագործման հետևանքով, իսկ էլ ավելի ցավալին ընդհանուր արհեստական ստեղծած վատ կարծիքին տրվելու փաստով: Ունեցել ենք դեպքեր, երբ ապարատն իրոք ունեցել է տեխնիկական խնդիր, որոնք, առանց բացառության, փոխվել են մատարկարարի կողմից:

Ուզում եմ արձանագրել մի փաստ ևս: «Դժգոհող» ծնողների մոտ մեկ երրորդի երեխան անձամբ չի օգտագործում Gmate գլուխավորը: Երեխաների արյան մեջ գլուխավորի չափումն իրականացնում են ժամանակակից սենսորներով, որոնք ձեռք են բերում իրենց միջոցներով:

Որպես ձեռքբերում նշեմ, որ նախկինում տրամադրվող գլուխավորներին համապատասխան ստացվող թեստ երիզների քանակը՝ 50 հատը մեկ տուփումը ներկայիս Gmate գլուխավորի շնորհիվ կրկնապատկվել է՝ դառնալով 100 հատը երկու տուփում:

Առաջնորդվել տասնյակ ծնողների սուբյեկտիվ վերաբեմունքով, որը նրբորեն շաղախված է սպեկուլյատիվ մղումներով, կարծում եմ մնացած մոտ 700 շահառուների իրավունքների լուրջ ոտնահարում է:

Օբյեկտիվ դիտարկման համար կարող եմ առաջարկել իմ ծառայությունը՝ հիմնադրամը կատարի ստորագրահավաք արդեն ապարատից գոհ ծնողներից: Վստահ եմ արդյունը լուրջ հարաբերակցություն կունենա»:

4. ԳԲԲԱ-ՆԳ-2021/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԲԱ-ՆԳ-2021/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

1. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Զ/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը պետք լինի գործարանային տուփով, բայց ոչ ավել քան 100 հատ: Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանիության ժամկետը 12 ամիս: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարը պարտավոր է նաև նվիրաբերել կամ անհատույց օգտագործման հանձնել շաքարաչափ սարքեր (1000 հատ): Չափման արագություն՝ ոչ ավել քան 6 վրկ: Չափման միջակայքը՝ առնվազն 1,1 -33.3 մմոլ/լ: Արյան նմուշի ծավալը՝ ոչ ավել քան 0,65մլ: Մասնակիցը պետք է ներկայացնի որակի սերտիֆիկատ տվյալ խմբաքանակի համար հաստատված արտադրող գործարանի կողմից: Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 12 ամսվա երաշխիք տրամադրած սարքերի համար: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ GOST P ICO 13485: Որակի սերտիֆիկատներ՝ ISO 15197 կամ GOST P ICO 15197:

2. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				Տեխնիկական բնութագրերը
	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	
1	Զի մեյթ	Զի մեյթ	Զի մեյթ	Ֆայլոսիս Հարավային Կորեա	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը N 50: Թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանիության ժամկետը 12 ամիս: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, կնվիրաբերվի շաքարաչափ սարքեր (1000 հատ): Չափման արագություն՝ 5վրկ:

					Չափման միջակայքը՝ 1,1-33.3 մմոլ/լ: Արյան նմուշի ծավալը՝ 0,5 մկ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485: Որակի սերտիֆիկատներ՝ ISO 15197:
--	--	--	--	--	---

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 15.06.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի՝ 18.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ««Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ» ՍՊԸ-ի՝ 12.07.2021թ. դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Այսպես՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չ/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը պետք լինի գործարանային տուփով, բայց ոչ ավել քան 100 հատ: Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանիության ժամկետը 12 ամիս: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարը պարտավոր է նաև նվիրաբերել կամ անհատույց օգտագործման հանձնել շաքարաչափ սարքեր (1000 հատ): Չափման արագություն՝ ոչ ավել քան 6 վրկ: Չափման միջակայքը՝ առնվազն 1,1 -33.3 մմոլ/լ: Արյան նմուշի ծավալը՝ ոչ ավել քան 0,65մլլ: Մասնակիցը պետք է ներկայացնի որակի սերտիֆիկատ տվյալ խմբաքանակի համար հաստատված արտադրող գործարանի կողմից: Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 12 ամսվա երաշխիք տրամադրած սարքերի համար: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ GOST P ICO 13485: Որակի սերտիֆիկատներ՝ ISO 15197 կամ GOST P ICO 15197:

4. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				Տեխնիկական բնութագրերը
	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	
1	Ջի մեյթ	Ջի մեյթ	Ջի մեյթ	Ֆայլոսիս Հարավային Կորեա	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը N 50: Թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանիության ժամկետը 12 ամիս: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, կնվիրաբերվի շաքարաչափ սարքեր (1000 հատ): Չափման արագություն՝ 5վրկ: Չափման միջակայքը՝ 1,1-33.3 մմոլ/լ: Արյան նմուշի ծավալը՝ 0,5 մլլ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485: Որակի սերտիֆիկատներ՝ ISO 15197:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 15.06.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքով բարձրացվել են հետևյալ հարցերը.

1. « ... մասնակիցը պարտավոր է առաջարկող ապրանքի նկարագիրը ներկայացնել ամբողջությամբ և այնպիսի հստակությամբ, որ բացառի ապրանքի տարակերպ մեկնաբանությունը թե՛ պատվիրատուի, թե՛ մասնակիցների, և թե՛ սպառողների շրջանում: Առաջարկվող ապրանքի նկարագիրը պետք է համապատասխանի հրավերով սահմանված պահանջներին: Մասնավորապես, եթե ապրանքի ամբողջական նկարագրի աղյուսակը նախատեսում է ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ, արտադրող ընկերություն դաշտեր, ապա մասնակիցը պարտավոր է դրանք լրացնել ըստ նշանակության: Ընդ որում, եթե թվարկումը տարանջատված է ստորակետերով, ապա անհրաժեշտ և բավարար է յուրաքանչյուրի և բոլորի առկայությունը: Այսինքն մասնակիցը չի կարող նշել միայն ֆիրմային անվանում, սակայն չնշել մակնիշ (օրինակ՝ ապրանքի մոդելը: Մեկ մոդելի համար կարող են աշխատել տարբեր շաքարաչափի սարքեր (*տե՛ս նկար 1*): Gmate PS-004 մոդելի շաքարաչափի թեստ-երիզները աշխատում են մի քանի շաքարաչափի սարքերով: Դրանք են՝

- K113636 - Gmate VOICE™ Blood Glucose Monitoring System
- K141656 - Gmate® Mini Blood Glucose Monitoring System
Gmate® Step Blood Glucose Monitoring System,
- K150299 - Gmate SMART Blood Glucose Monitoring System,
- K151658 - Gmate Origin Blood Glucose Monitoring System

Սակայն առկա է նաև Gmate PS-003 մոդելի շաքարաչափի թեստ-երիզներ, որոնք աշխատում են կոնկրետ շաքարաչափի սարքերի՝ Gmate plus-ի հետ, Gmate Life-ի թեստ-երիզները աշխատում են բացառապես Gmate Life շաքարաչափի սարքերի հետ)...)»:

«Կոնցենոն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն ներկայացված բողոքի լրացմամբ ևս պնդել է, որ կողմից իրականացված փաստահավաք գործունեության ընթացքում պարզեցինք, որ մինչև անգամ այդ ունիվերսալ ստրիպներն ունեն մակնիշ, այն է՝ PS-004, այսինքն՝ բողոքաբերը ներկայացված բողոքով պնդել է, որ Gmate թեստ-երիզները ունեն տարբեր մոդելներ և ներկայացված բողոքի լրացմամբ պնդել է, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավոր էր ներկայացված Հավելված 1.1-ում, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում մասնավորեցնել և հստակ նշել թե որ մոդելի թեստ-երիզն է առաջարկվում:

Այս մասով հարկ են համարում հայտնել հետևյալը.

«Հ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 13.07.2021թ. թիվ ԲԲԱ-ԳՆ/2/11291-2021 գրությամբ դիմել է PHILOSYS CO LTD-ին (գրությունն ուղարկվել է հետևյալ էլ. փոստի

հասցեով՝ information@philosys.com) և խնդրել է հայտնել, **արդյո՞ք PHILOSYS CO LTD-ի կողմից արտադրված Gmate թեստ-երիզներն ունեն փարբեր մոդելներ, թե՛ ոչ:**

Ի պատասխան նշված գրության PHILOSYS CO LTD-ն 14.07.2021թ. գրությամբ (ստորագրված է PHILOSYS CO LTD-ի գլխավոր գործադիր տնօրեն Ալեքս Լիի կողմից) հայտնել է, որ Gmate թեստ-երիզները չունեն փարբեր մոդելներ և համատեղելի են միայն Gmate® Origin, Gmate® ON, Gmate® VOICE, Gmate® SMART, Gmate® SMART Type-C և Gmate® Wheel սարքերի հետ:

2. Հաջորդ խնդիրը, որը ներկայացվել է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից հետևյալն է.

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/18 գնման ընթացակարգի հրավերի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է պայման, համաձայն որի թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշել է, որ թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Սակայն բաց տեղեկատվական հարթակներում առկա պաշտոնական տվյալները այլ բան են ապացուցում: Մասնավորապես Gmate-ի պաշտոնական կայքում առկա է օգտագործման ձեռնարկ, որի առաջին էջում նշված է, որ անրաժեշտ է ֆիքսել այն ամսաթիվը, երբ առաջին անգամ բացվում է սրվակը: Ընդ որում նշվում է, որ թեստ-երիզները պիտանի են օգտագործման բացելու պահից 3 ամիս...»:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.07.2021թ. թիվ ԲԲԱ-ԳՆ/2/11410-2021 գրությամբ դիմել է PHILOSYS CO LTD-ին (գրությունն ուղղված է եղել PHILOSYS CO LTD-ի գլխավոր գործադիր տնօրեն Ալեքս Լիին և ուղարկվել է հետևյալ էլ. փոստի հասցեներով՝ information@philosys.com, dhlee@philosys.com) և խնդրել է հայտնել, **արդյո՞ք PHILOSYS CO LTD-ի կողմից արտադրված Gmate թեստ-երիզներն ունեն պիտանելիության ժամկետ և արդյո՞ք դրանց պիտանելիության ժամկետը փոխվում է տուփի բացման պահից:**

Ի պատասխան նշված գրության PHILOSYS CO LTD-ն 16.07.2021թ. գրությամբ (ստորագրված է PHILOSYS CO LTD-ի գլխավոր գործադիր տնօրեն Ալեքս Լիի կողմից) հայտնել է, որ Gmate թեստ-երիզները ունեն 24 ամիս պիտանելիության ժամկետ և այն չի փոխվում բացելուց հետո:

Այսպիսով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ուսումնասիրության և այն արտադրող ընկերությանն արված հարցումների պատասխանների հետ համադրելու արդյունքում, արձանագրում եմ, որ այն ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան և դրանում ներկայացված տվյալները ճշգրիտ են, հետևաբար՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելը և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելն, իրավաչափ են:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի 18.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ առողջապահության նախարարության դիրքորոշումը, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12.07.2021թ. ներկայացված դիրքորոշումը և Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերը և PHILOSYS CO LTD-ին արված հարցումների պատասխանները՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 18.06.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ